ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետության Հեսսեն-Նասաու նահանգի Ավետարանական-Լութերական Եկեղեցու նախագահ Հայր դոկտ. Մարտին Նիմյուլլերը և նույն Եկեղեցու ավագ խորհրդատու Հայր դոկտ. Հանֆրիդ Կրյուգերը:

Վեհափառ Հայրապետը բարձրաստիճան հոգևորականների հետ ունեցավ ջերմ զրույց ընդհանուր եկեղեցական հարցերի շուրջ:

Կիրակի օրը, մայիսի 7-ին, հյուրերը Մայր Տաճարում ներկա եղան հանդիսավոր սուրբ պատարագի: Նրանք ծանոթացան Մայր Աթոռի սրբավայրերին և Հայաստանում ներկա հայ եկեղեցական կյանքին:

Մայիսի 8-ին հյուրերը այցելեցին Գառնիի հնությունները և Ս. Գեղարդի վանքը, ապա եղան Ս. Հռիփսիմեի վանքում:

Նույն օրը հյուրերը այցելեցին Հոգևոր Ճեմարան:

Մայիսի 9-ին, երեքշաբթի առավոտյան, հարգելի հյուրերը մեկնեցին Ս. Էջմիածնից:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

9 մայիսի 1961 թ.
Ս. Էջմիածին